ԱՐԱԲՕ-ԱՆՈՒՇԱՒԱՆ

Ինքը երեք զաւակ ունէր: Զորորդին էին սպասում: Վստահ էր, որ տղայ է ծնուելու: «Արաբօ եմ դնելու անունը,-ասում էր,- որ հայրենիքի պաշտպան ու թուրքի սարսափ դառնայ»...

Ղարաբաղեան շարժման առաջին օրերին քչերն էին այն համոզմունքին, որ միայն զէնքով կայ հային փրկութիւն: Այդ քչերից առաջինները Բերդաձորի ինքնապաշտպանութեան ջոկատի անդամներն էին: Նրանց մէջ՝ Անուշաւանը: Պատմում է ազատամարտիկի քոյրը. «Ողջ Հայաստանն այդ օրերին ցոյց ու միտինգ էր անում. բոլորի շուրթերին «Ղարաբաղ» ու «Միացում» էր: Ցոյց ու միտինգի տենդ էր : Այդպիսի մի օր էր, երբ Անուշաւանը տուն եկաւ ու կնոջը՝ Անժելային ասաւ. «Պատրաստուի՛ր, երեխաների հետ գնում ենք Բերդաձոր»: Գնացին: Այնտեղ մտաւ Հ. Յ. Դ. ի շարքերը: Ինքնապաշտպանական ջոկատներ էին կազմակերպում, մեծ դժուարութեամբ զէնք ու զինամթերք էին հասցնում Բերդաձոր: Լաչինի միջանցքը փակ էր: Ուղղաթիռներով, թշնամու որջերի վրայով էին թռչում: Երեւանում ազատամարտիկներին հետապնդում էր ՊԱԿը, իսկ այնտեղ դարանակալ սպասում էր ՕՄՕՆն ու ռուսական զօրքը: Զինատարներն ամէն անգամ օդ էին բարձրանում՝ մահն աչքերի առջեւ ունենալով: Գրպաններում միշտ պատրաստ ունէին սուրսայր ածելիներ, որ շրջապատման մէջ ընկնելիս կըտրեն երակները, գերի չընկնեն...: Վերջին անգամ քիչ էր մնում ծուղակն ընկնէին, սակայն բարեբախտաբար շուտ նկատեցին դարանն ու վայրէջք կատարեցին ոչ թէ Բերդաձորում, այլ մօտակայ ատրպէյճանական գիւղի մօտ՝ անտառի բացատում: Այնտեղից գիշերով, շալակով, դժուարանց արահետներով զէնքն ու զինամթերքը հասցրին Բերդաձոր: Զէնք տեղափոխելուց բացի Անուշաւանը վերանորոգում էր գիւղի հացի փուռը: Սակայն ընդամէնը մի շաբաթ կարողացաւ հաց թխել ու բաժանել ժողովրդին: 91 թ. մայիսի 15ին ռուսական զօրքն ու ՕՄՕՆը մտան գիւղ: Մտան ու գիտէին, գիտէին՝ ով ով է: Իսկոյն շրջապատեցին մեր տունն ու իմ աչքի առջեւ, տան մէջ, գնդակահարեցին եղբօրս՝ Անուշաւանին: Զոհուեց սիրասուն եղբայրս: Զոհուեց, հաւատացած, որ Բերդաձորն ազատագրուելու է, առնական զաւակներ է ծնելու: Ինքը երեք զաւակ ունէր: Զորրորդին էին սպասում: Վստահ էր, որ տղայ է ծնուելու: «Արաբօ եմ դնելու անունը, - ասում էր՝, որ հայրենիքի պաշտպան ու թուրքի սարսափ դառնայ»...: Զոհուելուց քսան օր անց ծնուեց արու զաւակ: Կնքեցին **Արաբօ-Անուշաւան**:



Հիմա թլուատ հարցնում է՝ ո՞ւր է պապաս: Չեմ կարողանում պատասխանել: Կը գայ օրն ու նա կ'իմանայ հօր տեղը՝ այնտեղ, ուր Արցախի համար զոհուած նահատակներն են, եղբօրս զինակից ընկերները՝ Վարդանը (Բախշեան), Ստեփանը, Նորիկը, Վաղոն, Անդոն (Առնօ), Հրաչիկը, Գագոն (Արվիգ)...:

88ից ի վեր շատ բան է փոխուել: 91ի մայիսի 15ին ընկաւ Բերդաձորը: Ընկաւ Անուշաւանը: 92ի մայիսի 15ին, մի տարի անց, ազատագրուեց: 93ի մայիսի 15ին լրանում է Բերդաձորի ազատագրման մի տարին, լրանում է Անուշաւանի նահատակման երկու տարին: Այդ ընթացքում կորցրեցինք Շահումեանն ու Մարտակերտը: Բայց ազատագրուեց Շուշին, բացուեց Լաչինի միջանցքը, Արցախում թուրք չմնաց, ազատագրուեց Քարվաճառը: Ստեղծուեց Արցախի բանակը, որն ամէնուր ջախջախիչ հարուածներ է հասցնում թշնամուն...: Այդ ընթացքում ոտքի ելաւ ու լեզու առաւ Անուշաւանի որդի Արաբօ-Անուշաւանը, որը բնազդով արդէն անպայման գիտէ հօր տեղը անմահների մէջ: Ու երբ գայ օրը եւ անմահները հրամայեն նրան՝ կ'ելնի հօր հետքերով՝ հզօր, անսասան եւ յաղթական ու երջանիկ, քանզի նրա ընթացքը պաշտպանելու են երկու վիթխարի ոգի՝ Արաբօ եւ Անուշաւան:

«ԵՐԿԻՐ», 15 մայիս 1993